Դաս 32. Սասունցի Դավիթ

Հովհ. Թումանյան
«Սասունցի Դավիթ»
(հատված)

***

– Մելիք,– ասավ,– ո՞ւմն է հերթը:
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռոզ հոգին:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար:

Մըռընչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

***

Ասավ, ելավ ու փոթորկեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կայծակին:

Անցավ քառսուն գումշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,

Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Օխտը գազ էլ դեմը գընաց:

– Կենդանի՞ եմ, մին էլ արի՞,–
Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լըսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր–Կայծակից...

– Մելի՛ք,– ասավ,– թա՛փ տուր մի քեզ:
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն: